«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակերպումը, որը ուղղված է սանի մոտ աշխատելու պահանջմունքի և աշխատասիրության ձևավորմանը:

Դաստիարակ՝ Թեհմինա Անտոնյան

Մանկապարտեզ՝ « Եղվարդի թիվ 1 մանկապարտեզ » ՀՈԱԿ

2022թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն _ _ _

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության նպատակը- Մանկավարժական աշխատանքի և մեթոդների կիրառմամբ հասնել նախադպրոցական տարիքի երեխաների՝ ցանկացած աշխատանքի արդյունքի հանդեպ կայուն հետաքրքրության ձևավորման առավել բարձր մակարդակի,

և հասնել այդ գործընթացում շրջակա միջավայրի և դրա պահպանման վերաբերյալ սեփական դերի և նշանակության բարձրացման:

Վարկածը-Մանկավարժական մեթոդների կիրառումը (աշխատանք ենթախմբերով, զննական, գործնական) կնպաստի նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության խնդիրների կատարելագործմանը:

Հետազոտության ընթացքը-Հետազոտական աշխատանքը կատարվել է Եղվարդ քաղաքի թիվ 1 մանկապարտեզում, 2022 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 21-ը: Իմ կողմից որպես հետազոտության առանցք ընտրվել է ավագ նախադպրոցական տարիքի երեսուն երեխա, ստեղծվել է համապատասխան մանկավարժական պայմաններ, իրականացվել որոշակի մանկավարժական աշխատանք, որը նպաստել է նախադպրոցականի աշխատանքային դաստիարակությանը: Հետազոտական աշխատանքի իրականացման համար օգտվել եմ դիտման, զրույցի, զննական, գործնական, ինչպես նաև ինտերակտիվ մեթոդներից:

Հետազոտական աշխատանքի ընթացքում բացահայտվեց ավագ նախադպրոցականի աշխատանքային ունակությունների առկա մակարդակը: Հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում փորձեցի ստեղծել պայմաններ, որում հնարավորություն է ընձեռնվում կատարելագործել ավագ նախադպրոցականի աշխատանքային դաստիարակության խնդիրների կատարելագործմանը:

Հետազոտական աշխատանքի ավարտին պարզ դարձավ, որ բավականին մեծ արդյունքների ենք հասել՝ անհամեմատ ակտիվացել է երեխաների մեջ աշխատելու պահանջմունքի զարգացումը, ցանկացած աշխատանքի արդյունքի հանդեպ ձևավորվել է կայուն հետաքրքրություն:

Հետազոտական աշխատանքի ընթացքում աշխատել եմ ԳՈՒՍ մոդելով և ԽԻԿ համակարգով:

Գլուխ1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՈՐԸ ՈՒՂՂՎԱԾ Է ՍԱՆԻ ՄՈՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԸ

Աշխատասիրությունը բոլոր առաքինությունների մայրն է,
ինչպես ծուլությունը ծնողն է ամենայն մոլության:

Ղ. Աղայան

Երեխաների համակողմանի և ներդաշնակ զարգացման համակարգի գլխավոր խնդիրներից է աշխատանքային դաաստիարակությունը: Աշխատանքային դաստիարակության խնդիրներն են՝

- Աշխատանքի հանդեպ հարգանքի և գիտակից վերաբերմունքի ձևավորում
- Աշխատանքային գործունեության տարրեր ձևավորում
- Աշխատանքային կարողությունների և հմտությունների ձևավորում
- Աշխատելու պահանջմունքի զարգացում
- Բարոյակամային հատկությունների ձևավորումը աշխատանքի միջոցով
- Աշխատասիրության դաստիարակություն
- Սոցիալական հատկությունների ձևավորումը աշխատանքի միևոցով
- Աշխատանքային գործնաան փոխհարաբերությունների ձևավորում
- Ցանկացած աշխատանքի արդյունքի հանդեպ կայուն հետաքրքրություն ձևավորում
- Նյութական արժեքների ստեղծման նշանակության բացահայտում:

Աշխատանքային դաստիարակության խնդիրներն իրականացնելիս դաստիարակը երեխաներին հաղորդակից է դարձնում ազատ, ստեղծագործական աշխատանքին՝ որպես համամարդկային արժեքի, աշխատանք է տանում հաղթահարելու նեղ կենցաղային կողմնորոշումը երեխաների առարկայական-գործնական աշխատանքը կազմակերպելիս կատարելագործելու երեխաներիս այդ գործունեության մեջ ներգրավելու մեթոդներն ու մեծերի աշխատանքին ծանոթացնելու ձևերը:[1]

Գիտատեխնիկական առաջընթացի և շուկայական հարաբերությունների կայացման պայմաններում բավականին բարդ է աշխատանքային ոլորտի ընտրությունը ձեռնարկատերերն աշխատանքի են ընդունում առավել որակյալ և բանիմաց մասնագետների: այդ իսկ պատճառով ներկա ժամանակաշրջանում խիստ կարևոր է երեխաների աշխատանքային դաստիարակությունը, հարկավոր է վաղ հասակից լուրջ ուշադրություն դարձնել այդ հարցին, նրանց մեջ արթնացնել աշխատելու ցանկություն և ձևավորել աշխատասիրություն աշխատանքը սկիզբ է առել մարդկային հասարակության ձևավորման արշալույսին և ուղեկցել մարդուն մինչև մեր օրերը: Ինչպես ասել է Հ. Այվազովսին <<Ապրել նշանակում է աշխատել>>: Աշխատանքը երեխայի սոցիալականացման կարևորագույն միջոցներից է: Այն նպաստում է նրա ճանաչողական, հոգևոր և ֆիզիկական զարգացմանը: Աշխատասիրությունը բարոյական հատկանիշ է, այն նախ և առաջ հարգանք է սեձափական և այլոց աշխատանքի հանդեպ: Ընտանիքում աշխատանքային դաստիարակության հիմնական խնդիրն է՝ երեխայի մեջ զարգացնել բարոյական, ֆիզիկական և մտավոր կարողություններ: Ընտանիքում աշխատանքային գործունեության ընթացքում երեխայի մեջ զարգանում են այնպիսի որակներ, ինչպիսիք են պատասխանատվությունը, մաքրասիրությունը, կոկիկությունը, ուրիշների աշխատանքը գնահատելը և հարգելը: Հարկավոր է երեխային հանձնարարել այնպիսի աշխատանքներ, որոնք նա ի վիճակի է կատարելու: Աշխատանքի կատարման որակը միշտ պետք է համարել առաջնային, երբեք չի կարելի հանդիմանել կամ պատժել վատ կատարած աշխատանքի համար: Պետք է առաջնորդվել Վոլտերի հետևյալ խոսքերով <<Աշխատանքը մեզ ազատում է երեք չարիքից՝ ձանձրույթից, մոլորությունից և կարիքից>>: [2]

Աշխատանքային կրթության ամբողջ համակարգի նպատակն է երեխաների բարոյահոգեբանական և գործնական նախապատրաստումը բարեխիղճ աշխատանքի համար ընդհանուր բարորության և աշխատասիրության սկզբունքների ձևավորմանը: Աշխատասիրությունը հնարավոր է դարձնում առաքինությունների իրականացումը և այդպիսով ինքն էլ մի տեսակ առաքինություն է՝ որոշ իմաստով նույնիսկ ավելի բարձր, քան մյուս առաքինությունները: Կ. Դ. Ուշինսկին ասում է. <<Միայն աշխատանքի ներքին հոգեկան կենարար ուժն է իբրև աղբյուր ծառայում մարդկային արժանապատվության, դրա հետ միասին նրա բարոյականության և երջանկության համար>>: Պատկերավոր են նաև Ռաֆֆու խոսքերը. <<Գանձ գտնող աղքատի որդիքը սոված կմեռնեն, իսկ քրտինքով վաստակած հացը չի սպառվի>>:[5]

Մանկապարտեզում այս նպատակը լուծվում է երեխաների տարիքային հնարավորություններին, ինչպես նաև նրանց աշխատանքային գործունեության առանձնահատկություններին համապատասխան:

Աշխատանքը բնության մեջ երեխաների ակտիվ իրագործելի մասնակցությունն է ծաղկի այգում, այգում աշխատանքին, ինչպես նաև փակ բույսերին և ընտանի կենդանիների խնամքին: Բնության մեջ տարատեսակ աշխատանքը երեխաներին մեծ ուրախություն է հաղորդում և նպաստում նրանց համակողմանի զարգացմանը: Աշխատանքի ընթացքում դաստիարակվում է սերը բնության հանդեպ, զգույշ վերաբերմունքը նրա նատմամբ: Թիմում երեխաները սովորում են միասին աշխատել, օգնել միմյանց:[4]

Աշխատանքը բնության մեջ մեծ դաստիարակչական նշանակություն ունի, այն ընդլայնում է երեխաների մտահորիզոնը, բարենպաստ պայմաններ է ստեղծում զգայական դաստիարակության խնդիրների լուծման համար: Աշխատելով բնության գրկում երեխաները սովորում են՝

Ա) Բույսերի՝

- Հատկությունները և որակները
- Կառուցվածքը
- Զարգացման հիմնական փուլերը
- Աճեցման եղանակները

- Սեզոնային փոփոխությունները

Բ) Կենդանիների՝

- Արտաքին տեսքը
- Շարժման եղանակները
- Սովորությունները
- Ապրելակերպը
- Սեզոնային փոփոխությունները

Աշխատանքի ընթացում անհնաժեշտ է գիտելիքների հետ միասնաբար ձևավորել գործնական հմտություններ և կարողություններ: Աշխատանքի իրազեկում, որը ներառում է երեխային իր նպատակների, արդյունքների և դրանց հասնելու ուղիների բացահայտում, բնության մեջ երեխաների աշխատանքային գործունեությունը պետք է համակարգված բարդանա: Աշխատանքային գործունեությունը պետք է կանոնավոր լինի: Դաստիարակի համար կարևոր է յուրաքանչյուր երեխային կցել աշխատանքին: Աշխատանքի ժամանակ անհրաժեշտ է ապահովել երեխաների ճիշտ կեցվածքը՝ փոխարինելով աշխատանքի մի տեսակը մյուսով: Երեխայի ծաղսած ֆիզիկական ջանքերը չպետք է գերծանրաբեռնվածություն առաջացնեն: Աշխատանքի գործիքները պետք է լինեն բացարձակապես անվտանգ, որպեսզի համապատասխանեն երեխայի աճին և ուժին: Բնության մեջ աշխատանքները կազմակերպվում են անհատական առաջադրանքներով, որոնք կիրառվում են նախադպրոցական հաստատության բոլոր տարիքային խմբերում և կոլեկտիվ աշխատանք բնության մեջ, որը միավորում է երեխաներին, ձևավորում աշխատանքի ընդհանուր նպատակն ընդունելու, բանակցելու կարողությամբ:[3]

Գլուխ 2. ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ՊԼԱՆ

Թեմա- <<Սենյակային բույսերի խնամք>>

Նպատակ- Կատարելագործել կենդանի բնության տարրերից՝ սենյակային բույսերի հանդեպ ունեցած սերը, դասակարգել պրակտիկ կարողությունները և գործողությունները բույսերին խնամելու վերաբերյալ (հողը փխրեցնել, ջրել, ջրցողել, մաքրել տերևների փոշին):

Զարգացնել համատեղ աշխատանքային կարողությունը:

Ամրապնդել բույսերի կառուցվածքի մասին երեխայի ունեցած գիտելիքները:

Անհրաժեշտ նյութեր և գործիքներ- Փոքրիկ սփռոցներ սեղանների համար, գոգնոցներ, հողը փխրեցնելու փայտիկներ, փոշին մաքրելու լաթեր, խոզանակ, ցնցուղ:

Զարգացնող միջավայր- Սենյակային բույսեր, ակվարիումով ձկներ, վանդակով թութակ, աշխատանքային գործիքներ:

Ընթացքը- Դաստիարակ-Մեզ հայտնի է, որ օդը, որը մենք շնչում են փակ տարածքներում, աղտոտված է, ինչպես մանկապարտեզում, այնպես էլ տանը: Մենք շրջապատված ենք այնպիսի առարկաներով, որոնք աղտոտում են օդը, դրանք են՝ գորգը, փափուկ կահույքը, մեր հագուստը:

Հարց. Ինչպե՞ս ենք մաքրում օդը թակ տարածքում:

Երեխաներ- .....

Դաստիարակ- Ճիշտ է, խոնավ մաքրման միջոցով:

Հարց. Իսկ ինչպե՞ս ազատվել անեսանելի միկրոբներից, որոնք չեն մաքրվում խոնավ մաքրման ժամանակ:

Ապա նայեք շուրջը, ինչե՞ր կան մեր խմբասենյակում:

Երեխաներ- .....

Դաստիարակ- Ի՞նչ եք կարծում, ինչի՞ համար են մեզ անհրաժեշտ սենյակային բույսերը:

Երեխաներ- .....

Դաստիարակ- Ճիշտ է, սենյակային բույսերը ոչ միայն գեղեցկացնում են մեր շրջապատը և մեզ հաճելի են, այլև մեզ օգուտ են բերում: Սենյակային բույսերը մաքրում են օդը:

Հարց. Երեխաներ, իսկ ծաղիկները կարո՞ղ են մեզ պատմել իրենց վշտերի մասին: Նրանք կարո՞ղ են առանց խոսքերի ասել, որ իրենք վատ են:

Երեխաներ- .....

Դաստիարակ-Հարց. Ինչպե՞ս պետք է խնամենք սենյակային բույսերը:

Ո՞ր ծաղիկները պետք է ջրցողենք:

Ո՞ր ծաղիկների հողը պետք է փխրեցնենք:

Ինչպե՞ս պետք է ջրենք ծաղիկները:

Բոլոր ծաղիկները նույն ձևո՞վ ենք ջրում:

Ո՞ր ծաղիկներն են մեզ օգնության կանչում:

Երեխաներ- .....

Դաստիարակ- Հիմա մոտենանք բնության անկյանը և պարզենք, թե որ ծաղիկներին պետք է օգնենք (երեխաների հետ միասին պարզում ենք, թե որ ծաղիկերին պետք է խնամենք, և ընդանուր բնության անկյունից դուրս ենք բերում տվյալ բույսերը):

Դաստիարակ- Երեխանե՛ր, հագե՛ք գոգնոցները և վերցրե՛ք գործիքները, որոնք անհրաժեշտ են ձեր բույսերին: Մինչ աշխատանքը սկսելը, եկեք վերհիշենք, թե ինչ կանոններ ենք մշակել մեզ համար, բույսերը խնամելու ժամանակ:

Ծաղիկներին վերաբերվել՝ ինչպես մարդուն, չշտապել աշխատանք կատարելիս:

Մենք կաշխատենք երաժշտության ուղեկցությամբ, կզրուցենք ծաղիկների հետ, չէ՞ որ նրանք էլ ենզգում՝ որքան ենք սիրում մենք իրենց:

Եկե՛ք արտասանենք և աշխատենք:

Փոքրիկ դույլով ջուրեմ բերում

Եվ ծաղիկներն եմ ջրում,

Խնամում եմ, մշակում,

Աշխատանքով հիանում:

Դաստիարակ- Երեխաներ, ձեզ դուր եկա՞վ մեր կատարած աշխատանքը:

Երեխաներ- .....

ԴԻՏԱՐԿՈՒՄ

Պարապմունքի միջոցով դաստիարակը փորձել էր վեր հանել աշխատանքային դաստիարաության դերը նախադպրոցական տարիքում: Որպես աշխատանքի տեսակ ընտրել էր աշխատանք բնության գրում:

Նպատակն իրականացնելու նպատակով դաստիարակը երեխաներին հաղորդակից էր դարձնում ազատ,ցտեղծագործական աշխատանքին բերկանքին,ձգտում նրանց մեջ առաջացնել հետքրքրություն աշխատանքի նկատմամբ: Շատ կարևոր էր դաստիարակի կողմից աշխատանքի նկատմամբ հուզական դրական վերաբերմունքի ստեղծումը, քաջալերումը,խրախուսումը: Դաստիարակի նպատակն էր զարգացնել տնտեսական, ճանաչողական և սոցիալական կարողունակությունները:

Դաստիարակի կողմից տրվող առաջադրանքները հստակ էին, դրանց ստուգումը հետևողական:

Երեխաները մեծ պատասխանատվությամբ և հոգատարությամբ էին կատարում իրենց հանձնարարությունները: Օգնում էին միմյանց, փոխանակում գործիքները, ազատ էին, անկաշկանդ: Իրենց ձեռք բերված գիտելիքները հմտորեն օգտագործում գործնականում:

Դաստիարակի կողմից հետազոտական աշխատանքը շատ կարևոր է նախադպրոցականի կրթության մեջ, քանի որ այն լուծում է բազմաթիվ խնդիրներ, այս տարիքային փուլում է զարգանում շատ կարևոր անձնական որակներ,հմտություններ, կարողություններ՝

- Հաիգալից վերաբերմունք մեծերի աշխատանքի նկատմամբ և օգնելու ցանկություն
- Աշխատանքային հմտությունների զարգացում և դրանց կատարելագործում
- Երեխաների դրական բարոյական որակների ձևավորում,աշխատանքի ցանկություն ,պատասխանատվություն, խնայողություն
- Թիմային համագործակցություն, օգնություն ցույց տալու, հարգալից վերաբերմունքի հմտություն

Եղվարդի թիվ 1 մնկապարտեզի տնօրեն՝ Տ. Ավետիսյան

1. Դաստիարակը հասավ պարապմունքի նպատակին, քանի որ պարապմունքի ընթացքում ակնհայտորեն լուծվեց աշխատանքային դաստիարակության հետևյալ խնդիրները՝ երեխաների աշխատելու պահանջմունքի զարգացումը, աշխատանքի հանդեպ հարգանքի և գիտակից վերաբերմունքի ձևավորումը, աշխատասիրության դաստիարակությունը: Աշխատանքներն ուղղված էին տնտեսագիտական կարողունակությունների զարգացմանը: Երեխան հասկանում էր շրջապատող աշխարհի և բնության երևույթների միասնականութանն ու փոխկապակցվածությանը: Երեխաները հասկանում էին շրջակա միջավայրի պահպանան գործում սեփական դերն ու նշանակությունը: Ապահովված էր զարգացնող առարկայական միջավայրը:
2. Երեխաներն ամբողջությամբ երգրավված էին աշխաանքային գործունեության մեջ, ակտիվ ասնակցություն էին ցուցաբերում՝ հող փորում, ջրում, մաքրում

տերևների փոշին: Աշխատանքի ընթացքում համագործակցում էին մեկը մյուսի հետ, աշխատում ենթախմբերով:

3. Նախադպրոցական կրթության մեջ աշխատանքային դաստիարակության գործընթացի կազմակեպումը շատ եմ կարևորում, քանի որ այն լուծում է մի շարք խնդիրներ՝

- Ձևավորում է աշխատանքի հանդեպ գիտակից վերաբերմունք
- Երեխաների մեջ ձևավորվում են բարոյական հատկանիշներ՝ հոգատարություն, բարություն, ապրումակցում
- Երեխաները դառնում են իքնուրույն, կարողանում են կատարել պարզագույն կենցաղային աշխատանքներ
- Երեխաները ֆիզիկապես ակտիվ են դառնում

Մեթոդիստ՝Գ. Գրիգորյան

Պարապմունքը դիտարկում էին մանկապարտեզի տնօրենն ու մեթոդիստը: Վերլուծության ժամանակ եկանք այն եզրահանգմանը, որ բնության անկյունում կատարված աշխատանքը արդյունավետ էր, քանի որ երեխաների մեջ սերմանվեց սեր և հարգանք դեպի բուսական աշխարհը, խնամքով վերաբերմունք դեպի սենյակային բույսերը, աշխատանքը կատարում էին ազատ և անկաշկանդ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, հետազոտական աշխատանքից ստացված արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ

- Ստեղծված զարգացնող միջավայրը նպաստեց նախադպրոցականի աշխատանքային հմտությունների հմտությունների և կարողությունների կատարելագործմանը,
- Մանկավարժական մեթոդների կիրառումը նպաստեց նախադպրոցականի աշխատանքյին դաստիարակության հանդեպ աշխատանքի արդյունքի կայուն հետաքրքրության ձևավորման առավել բարձր մակարդակի,
- Նախադպրոցական տարիքի երեխաների հետ աշխատանքային դաստիարակություն իրականացնելիս իրենց հետագա աշխատանքի ընթացքում դաստիարակները ուշադրություն դարձնեն աշխատանքի ընթացքում երեխաների մոտ բարձր մոտիվացիա ապահովելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՑԱՆԿ

1. Մանկապարտեզի ավագ խմբի (5-6 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, /Երևան 2007/, էջ 125-130 [1]
2. ԿԱԻ <<Ընտանիք և դպրոց>>, /Երևան 2010/, էջ10-16 [2]
3. ԿԱԻ <<Նախաշավիղ>>, էջ 54-57 [3]
4. Т. С. Комарова, Л. В. Куцакова, Л. Ю. Павлова <<Трудовое воспитание в детском саду>>, /Москва 2009/, ст. 48-51 [4]
5. Ս.Ա. Մարության, Ա.Մ. Դալլաքյան<<Նախադպրոցական մանկավարժություն>>, /Երևան 2008/, էջ 176-180 [5]